Հաստատված է
ՀՀ կրթության տեսչական մարմնի
խորհրդի 2021թ. նոյեմբերի 29-ի
N 7 որոշմամբ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիր

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԷՋԵՐ
	ՆԱԽԱԲԱՆ	3
1	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	4
2	ԿՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ	5
2.1	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	6
2.2	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	7
2.3	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	8
3	ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	9
3.1	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	9
3.2	ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	11
3.3	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	15
4	ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	16
4.1	ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	16
4.2	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	23
5	ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	27
6	ԿՏՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Աղյուսակ N 1)	29
7	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (Աղյուսակ N 2)	35
8	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ N N 1, 2	39
9	ԿՏՄ ԿԱՐԻՔՆԵՐԸ	41

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև տեսչական մարմին կամ ԿՏՄ) վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող, ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է: Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության (միջնակարգ կրթության), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է՝ ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, հաշվի առնելով ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը, կրթության բնագավառի մարտահրավերներն ու զարգացման միտումները և տեսչական մարմնի նախորդ տարիների գործունեության արդյունքները՝ կրթության որակի, բովանդակության, մատչելիության, անվտանգության, կառավարման և արդյունավետության ուղղություններով:

1. ԾՐԱԳՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ծրագրում գործածվում են հետևյալ հապավումները՝

ՀՎ՝ հանրակրթության վարչություն

ՆՄՄԿՎ՝ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն

ՌԳՍՊՎԳՎ՝ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն

ԻԱՓՎ՝ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն

ՀՀԿԲ՝ հանրության հետ կապերի բաժին

ՆՈՒՀ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն

ՀՈՒՀ՝ հանրակրթական ուսումնական հաստատություն

ՆՄԱՈՒՀ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն

ՄՄՈՒՀ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն

ԶԼՄ՝ զանգվածային լրատվության միջոցներ

ՏԻՄ՝ տեղական ինքնակառավարման մարմին

ՖԿԱ ծրագիր՝ ՀՀ ֆինանսական կրթման ազգային ծրագիր

ԱՈՒԿ ծրագիր՝ «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիր

ԿԳՄՄՆ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր ստուգումներ իրականացնել 40 նախադպրոցական, 45 հանրակրթական, 28 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Տարվա ընթացքում տեսչական մարմնի հանրակրթության վարչության համակազմը մրցութային կարգով համալրվեց 3 ծառայողով, որի հիման վրա ստուգումների ծրագրում կատարվեց լրացում. ստուգվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվն ավելացվեց 5-ով, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններինը՝ 4-ով:

2021 թվականի առաջին 3 եռամսյակների ընթացքում իրականացված կանխարգելիչ և իրազեկման գործառույթների թիվը, ըստ վերահսկողության ոլորտների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Վերհսկողության ոլորտներ	Կանխարգելիչ և իրազեկման գործառույթներ
ՆՈՒՀ	14
ՀՈՒՀ	13
ՆՄՈՒՀ և ՄՄՈՒՀ	6

Նախադպրոցական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների առանձին բնութագրիչների գնահատման արդյունքների (հանրակրթության ոլորտի գնահատման արդյունքները դեռ մշակման փուլում են) ամփոփ վերլուծությունները հրապարակվել են տեսչական մարմնի պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/:

2.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2021 թվականի առաջին 3 եռամսյակներում իրականացվել են ԿՏՄ գործունեության 2021 թվականի և ստուգումների տարեկան ծրագրերով նախադպրոցական կրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական գործառույթները: ԿՏՄ 2021 թվականի ստուգումների ծրագրով նախադպրոցական կրթության ոլորտում նախատեսված 29 ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև մանկապարտեզ), կազմվել է 29 ակտ:

Իրականացված ստուգումների շրջանակում 29 մանկապարտեզներից 18-ում գնահատվել են մանկապարտեզների կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով ուղարկվել են ստուգված մանկապարտեզների տնօրեններին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ (խորհրդատվական և այլ մեթոդական աջակցության) 12 հեռավար և 2 առկա միջոցառումներ՝ համապատասխանաբար 81 և 20 մանկապարտեզների տնօրենների մասնակցությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 331 համատեղ ստուգայց Երևան քաղաքի 227 մանկապարտեզներում: 2 մանկապարտեզներում արձանագրված խախտումների հետևանքները վերացնելու վերաբերյալ մանկապարտեզների տնօրեններին տրվել են հանձնարարականներ:

Նախադպրոցական կրթության ոլորտում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված մեթոդական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի և ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Գործառույթի արդյունքում կազմված տեղեկանքները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, համապատասխան համայնքապետներին և մարզպետներին:

2.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2021 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2021 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով հանրակրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական գործառույթներն իրականացվել են:

ԿՏՄ 2021 թվականի ստուգումների ծրագրով հանրակրթության ոլորտում նախատեսված 26 ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 24 հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև դպրոց), կազմվել է 24 ակտ:

Դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողների «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայի 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիների մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով տրվել են գրավոր աշխատանքներ:

Համաձայն ԿՏՄ գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրի՝ ստուգված դպրոցներից 8-ում կրթական գործընթացը գնահատվել է կրթության որակի գնահատման ձևաթղթի համաձայն: Կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմը (ձևաթուղթը) բաղկացած է հետևյալ հավելվածներից՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Մաթեմատիկա», «Ուսումնական միջավայր», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)»: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ կրթության որակի բարձրացմանը միտված առաջարկներով՝ ուղարկվել են գնահատված դպրոցների տնօրեններին, որոշ դեպքերում՝ նաև կառավարման խորհուրդների նախագահներին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է կանխարգելիչ (աջակցման, խորհրդատվական) 8 հեռավար միջոցառում 71 դպրոցների տնօրենների, 5 առկա միջոցառում Երևան քաղաքի դպրոցների կառավարման խորհուրդների շուրջ 200 անդամների մասնակցությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 300 համատեղ ստուգայց Երևան քաղաքի 222 դպրոցներում: 5 դպրոցներում արձանագրված խախտումները շտկելու վերաբերյալ տնօրեններին տրվել են հանձնարարականներ:

Հանրակրթության ոլորտում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված մեթոդական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում: Գործառույթի արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին և ՀՀ Արարատի մարզպետին:

2.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2021 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2021 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական գործառույթներն իրականացվել են: ԿՏՄ 2021 թվականի ստուգումների ծրագրով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված 21 ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 18 հաստատություններում, կազմվել է 18 ակտ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 3-ական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Ձևաթուղթը բաղկացած է ՊՏնօրենՊ. =Ուսանողի հարցաթերթ-. ¯Գործընկեր կազմակերպություններ (Գործատու,Г հավելվածներից: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ (մեթոդական աջակցության, խորհրդատվական) 5 հեռավար միջոցառում՝ 38 տնօրենների մասնակցությամբ, և 1 իրազեկում-հանդիպում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 10 հաստատությունների ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և,

դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով իրականացված գործառույթները ներկայացված են Ծրագրի 4-րդ բաժնի 4.1-ին կետում:

3. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների արդյունքում նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում բացահայտված խախտումները, որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոններ (ռիսկեր), ներկայացված են սույն բաժնի 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ կետերում:

3.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նախադպրոցական կրթության ոլորտում 2021 թվականի առաջին 3 եռամսյակների ընթացքում 29 մանկապարտեզներում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում բացահայտված առավել հաճախ կրկնվող խախտումները ներկայացված են ստորև՝

1) ստուգված 29 մանկապարտեզներից 25-ում (86%) չեն հատկացվել մանկավարժական աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, մասնավորապես՝ 21 մանկապարտեզներում (72%)՝ ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքային միավորը.

2) 24 մանկապարտեզներում (83%) արձանագրվել են մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների չկատարմանը վերաբերող խախտումներ.

3) 22 մանկապարտեզ (76%) չունի կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիա.

4) 18 մանկապարտեզների (62%) արձանագրվել են խմբում սաների խտության խախտումներ.

5) 15 մանկապարտեզներում (52%) արձանագրվել են մանկավարժական աշխատողների նշանակումների խախտումներ.

6) 13 մանկապարտեզների (45%) տարատարիք խմբերում տարբերակված ուսուցում չի իրականացվել:

Մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների չկատարումը մանկապարտեզների հաստիքացուցակով նախատեսված հաստիքների (պաշտոնային դրույքաչափերի) չտրամադրման հետևանք է:

Գերբեռնված խմբերի առկայությունը և հաստիքների ոչ լիարժեք տրամադրումը կամ ընդհանրապես չտրամադրելը խնդիր է և ուղղակիորեն կապված է համայնքի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների հետ:

Տեսչական մարմնի ղեկավարի՝ խախտումների հետևանքները վերացնելուն ուղղված հանձնարարականներից (կարգադրագիր) ոչ բոլորն են կատարվել՝ տարբեր պատճառներով: Չկատարված հանձնարարականները հիմնականում վերաբերում են կադրային նշանակումներին, հաստիքային միավորների հատկացմանը, խմբերի գերբեռնվածությանը:

Համաձայն ստուգումների շրջանակում մանկապարտեզների գործունեության (կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում) գնահատման արդյունքների վերլուծությունների՝ չնայած մանկապարտեզներում կրթության կազմակերպման որակի ապահովումը, ըստ գնահատման ձևաթղթի, բավարար մակարդակով է իրականացվում, այնուհանդերձ առկա են նաև խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ կարող են ազդել կրթության կազմակերպման որակի և անվտանգության ապահովման վրա, մասնավորապես՝

– ուսումնական միջավայրի ոչ լիարժեք համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին.

– տարատարիք խմբերում իրականացվող կրթական ծրագրերի ոչ լիարժեք համապատասխանությունը չափորոշիչների պահանջներին.

– երեխաների ֆիզիկական, էկոլոգիական կուլտուրայի, գեղարվեստագիտական, թատերական և երաժշտական գործունեության, մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար պայմանների մասնակի առկայությունը.

– կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների առկայությունը.

– մանկապարտեզներում մանկավարժական աշխատողների մասնագիտական պասիվությունը.

– COVID-19-ի առկայության պայմաններում, մասնավորապես՝ զանգվածային միջոցառումներ իրականացնելու, հաստատության շենքերին հարակից տարածքներում մարդկանց կուտակումների, հաստատություններում, ըստ անհրաժեշտության, օդափոխություն չիրականացնելու, սոցիալական հեռավորություն չպահպանելու դեպքերի առկայությունը.

– շենքային ոչ բավարար պայմանների առկայությունը, հարմարեցված ոչ տիպային շենքերի առկայությունը, բակային տարածքների բացակայությունը:

3.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հանրակրթության ոլորտում 2021 թվականի առաջին 3 եռամսյակների ընթացքում 26 դպրոցներում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում բացահայտված առավել հաճախ կրկնվող խախտումները ներկայացված են ստորև՝

1) մանկավարժական աշխատողների նշանակման խախտումներ՝ 17 դպրոցներում (65%).
2) ուսումնական պլանների անհամապատասխանություն՝ 13 դպրոցներում (50%).
3) կանոնադրությունների անհամապատասխանություն՝ 9 դպրոցներում (35%).
4) սովորողի ընդգրկումը ոչ համապատասխան դասարանում՝ 8 դպրոցներում (31%):

Հանրակրթության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկայից: Գրավոր աշխատանքների միջոցով ստուգվել են սովորողների 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիների մնացորդային գիտելիքները:

Գրավոր աշխատանքին մասնակցած 1308 սովորողներից՝ Գերազանց՝ են գնահատվել 85-ը [illegible], Լավ՝ 206-ը [illegible], Բավարար՝ 487-ը [illegible], Անբավարար՝ 530-ը (41%):



ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի տարբերակների առաջադրանքների կեսը (5 միավորը) վերաբերել է 2018-2019 ուսումնական տարվա, մյուս կեսը՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին:

2018-2019 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից 623 6-րդ դասարանցիներից 269-ը (43%) ստացել են 0-2 միավոր, 264-ը (42%)՝ 3-4 միավոր, 90-ը (15%)՝ 5 միավոր:

2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից նույն սովորողներից 0-2 միավոր ստացել են 398-ը (64%), 3-4 միավոր՝ 181-ը (29%), 5 միավոր՝ 44-ը (7%):

9-րդ և 11-րդ դասարանների գրավոր աշխատանքների տարբերակներում առաջադրանքներից 2-ը եղել են ՊԵրկրաչափությունՊ առարկայից են. մեկը՝ 2018-2019 ուսումնական տարվա, մյուսը 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող:

2018-2019 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից 471 9-րդ դասարանցիներից 220-ը (47%) ստացել են 0-2 միավոր, 204-ը (43%)՝ 3-4 միավոր, 47-ը (10%)՝ 5 միավոր: 2018-2019 ուստարվա գիտելիքներին վերաբերող երկրաչափության 1 խնդիրը լուծել են 94 (20%) սովորողներ:

2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից նույն սովորողներից 0-2 միավոր ստացել են 348-ը (74%), 3-4 միավոր՝ 104-ը (22%), 5 միավոր՝

19 (4%): 2019-2020 ուստարվա գիտելիքներին վերաբերող երկրաչափության 1 խնդիրը լուծել են 78 (17%) սովորողներ:

2018-2019 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից 214 11-րդ դասարանցիներից 117-ը (55%) ստացել են 0-2-ական միավոր, 79-ը (37%)՝ 3-4 միավոր, 18-ը (8%)՝ 5 միավոր: 2018-2019 ուստարվա գիտելիքներին վերաբերող երկրաչափության 1 խնդիրը լուծել է 42 (20%) սովորող: 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից նույն սովորողներից 0-2 միավոր ստացել են 163-ը (76%), 3-4 միավոր՝ 39-ը (18%), 12-ը (6%)՝ 5 միավոր: 2019-2020 ուստարվա գիտելիքներին վերաբերող երկրաչափության 1 խնդիրը լուծել են 16 (7%) սովորողներ:



Ըստ ներկայացված տվյալների՝ բոլոր դասարաններում 2018-2019 ուստարվա մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքներն ավելի բարձր են, քան 2019-2020 ուստարվա արդյունքները:

Ստուգումների շրջանակում դպրոցներում իրականացված կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքները հնարավորություն են տալիս տարանջատելու դպրոցներում արդյունավետ իրականացվող և զարգացման ենթակա գործառույթները:

Հիմնականում (դպրոցների 50%-ից ավելիի դեպքում) ցածր արդյունքներ են գրանցվում հետևյալ ցուցանիշների գնահատման դեպքում՝

– ստուգման ընթացքում տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքում ՊԱնբավարարՊ ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 41 %-ից ավելի.

– ստուգման ընթացքում տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքում ՊԼավՊ և ՊԳերազանցՊ ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 30%.

– ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից ՊԼավՊ և ՊԳերազանցՊ գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում ՊԼավՊ և ՊԳերազանցՊ գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ (հաշվարկվել է ըստ առարկաների և միջինացվել) նվազել է 16 դպրոցներում.

– առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակից սովորողներ չեն եղել 10 դպրոցներում.

– ՊՇատ լավՊ և ՊԳերազանցՊ գնահատված ուսուցիչներ չեն եղել.

– ըստ ստուգման ակտի՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերվել են բոլոր դպրոցներում.

– դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ,

– դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացվել է տարեկան մեկ անգամ.

– բոլոր դասարաններում 2019-2020 ուստարվա համեմատ ավելի բարձր են 2018-2019 ուստարվա մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքները.

– դպրոցները չունեն արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթ՝ ցանկացած աղետների առկայության դեպքում ռիսկերի նվազեցման համար:

3.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում 2021 թվականի առաջին 3 եռամսյակների ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում բացահայտված խախտումները կրկնվում են առավելագույնը 2-ական հաստատություններում, բացառությամբ հաստատության կառավարման խորհրդի անդամի փոփոխությանը (3) և հաստատության կողմից դիպլոմների բաշխման վերաբերյալ լիազոր մարմին ներկայացվելիք հաշվետվությունների սահմանված կարգով կազմմանը (4) վերաբերող խախտումների: Խախտումները, որոնք կրկնվել են 2-ական հաստատություններում, ներկայացված են ստորև՝

1) մանկավարժական կադրերի նշանակում.

2) մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթաց.

3) ուսանողի վերականգնման գործընթաց.

4) ուսումնական պլանի անհամապատասխանություն.

5) դասալսումների գործընթաց.

6) տնօրենի կողմից հաստատության ներքին գնահատման տեղեկանքի ներկայացում խորհրդի քննարկմանը:

Ստուգումների շրջանակում իրականացված կրթական գործընթացի որակի գնահատման (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) արդյունքների համաձայն, հաշվի առնելով սոցիալական գործընկերների առաջարկները՝ հաստատություններում կրթության որակի բարելավման համար հաստատությունների տնօրեններին առաջարկվել է՝

– նպաստել սովորողների իրազեկվածության բարձրացմանը հաստատության կանոնակարգերի վերաբերյալ.

– սոցիալական գործընկերներին ներգրավել նաև կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման գործընթացներում առաջարկություններ ներկայացնելու աշխատանքներում.

– ընդլայնել սոցիալական գործընկերների հետ համագործակցության դաշտը և ներդնել համագործակցության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ.

– հաստատություններում ապահովել մասնագիտական գրականության բավարար առկայություն.

– թարմացնել նյութատեխնիկական, այդ թվում՝ SS բազան.

– միջոցներ ձեռնարկել մանկավարժների վերապատրաստման, մասնագիտական աճի ու զարգացման համար:

4. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

4.1. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1) Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով **նախադպրոցական կրթության ոլորտում** իրականացված ծրագրային 29 ստուգումների արդյունքում արձանագրվել է 285 խախտում: Խախտումների հետևանքների վերացման նպատակով տրվել է 170 հանձնարարական:

Հանրակրթության ոլորտում իրականացված 26 ստուգումների արդյունքում արձանագրվել է 291 խախտում, տրվել է 46 հանձնարարական: **Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում** իրականացված 21 ստուգումների արդյունքում արձանագրվել է 76 խախտում, տրվել է 10 հանձնարարական:

Ոլորտը	Ստուգված հաստատություն-ների թիվը	Հայտնաբերված խախտումների թիվը	Տրված հանձնարարական-ների թիվը
Նախադպրոցական կրթություն	29	285	170
Հանրակրթություն	26	291	43

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	21	76	10

2021 թվականի առաջին 3 եռամսյակները սահմանվել են որպես ստուգված ուսումնական հաստատությունների տնօրեններին տրված հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ 67 ուսումնական հաստատությունների համար (30 ՆՈՒՀ, 30 ՀՈՒՀ, 7 ՆՄԱՈՒՀ):

Տրված հանձնարարականների կատարողականները՝ ըստ ոլորտների.

Ոլորտը	Հանձնարարականների թիվը			
	տրված	կատարված	ընթացքի մեջ գտնվող	չկատարված
Նախադպրոցական կրթություն	150	44	53	53
Հանրակրթություն	231	198	29	4
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	14	7	7	0

2021 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգված 76 ուսումնական հաստատություններից 5-ի դեպքում (2 ՀՈՒՀ, 3 ՆՄԱՈՒՀ) ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել: Ստուգված 29 ՆՈՒՀ-երից 23-ի, 26 ՀՈՒՀ-երից 16-ի և 21 ՆՄԱՈՒՀ-երից 5-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2021 թվականի առաջին 3 եռամսյակներում:

Ոլորտը	Հանձնարարականների թիվը			
	տրված	կատարված	ընթացքի մեջ գտնվող	չկատարված
Նախադպրոցական կրթություն	122	42	36	44
Հանրակրթություն	35	21	13	1
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	10	4	6	0

Նախադպրոցական կրթության ոլորտում մասամբ կատարված հանձնարարականները վերաբերում են չհատկացված կամ պակաս հատկացված հաստիքային միավորներին, իսկ չկատարված հանձնարարականները՝ կադրային նշանակումներին:

Հանրակրթության ոլորտում չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականները վերաբերում են կադրային նշանակումներին:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ընթացքի մեջ են հիմնականում կադրային նշանակումներին վերաբերող խախտումները:

2) Նախադպրոցական կրթության ոլորտի կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են վերահսկողական գործընթացից առաջ՝ իրավական, մասնագիտական և մեթոդական աջակցություն ապահովելու նպատակով: **Հանրակրթության ոլորտում** կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխություններ, սահմանված կարգով կիրառում, COVID-19, արցախցի սովորողների խնդիրներ և այլն) ապահովման նպատակով: Մասնակիցները ծանոթացել են ստուգումների գործընթացին, ՀՀ կառավարության 04.10.2018թ. № 1139-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերի (հավելված 2) բովանդակությանը և կառուցվածքին: **Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտների** կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջների պատշաճ կիրառման ապահովման, ինչպես նաև ուսանողական խորհուրդների անդամների համար՝ իրավագիտակցության բարձրացման և ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով: ՌԳՍՊՎԳ վարչության կողմից իրականացվել են հեռավար միջոցառումներ (ըստ ոլորտների) ոլորտներում 2020 և 2021 թվականներին (ըստ եռամսյակների) իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթների (խնդիրների), ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության, ռիսկայնությունը որոշող չափորոշիչների ընդհանուր նկարագրի վերաբերյալ:

3) Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության և ԿՏՄ համագործակցությամբ իրականացվել է իրազեկման 5 առցանց հանդիպում-

խորհրդատվություն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների շուրջ 150 անդամների համար:

4) Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության, ինչպես նաև կրթությանն առնչվող խնդրահարույց տարբեր իրավիճակների վերաբերյալ քաղաքացիների կողմից ԿՏՄ պաշտոնական կայքին և ֆեյսբուքյան էջին հասցեագրվել է 26 գրավոր հարցում, որոնց սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ և բովանդակային պատասխաններ:

5) Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում 2021 թվականի գործունեության ծրագրով նախատեսված՝

- 10 հաստատությունների ուսանողական խորհուրդների 14 անդամների համար իրականացվել է հեռավար եղանակով (Zoom հարթակում) ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկում-հանդիպում՝ իրավագիտակցության բարձրացման և ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով,

- 33 տնօրենների, փոխտնօրենների, 6 մանկավարժական աշխատողների և 1 ուսումնական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների (այդ թվում ՀԿ-ներ) ներկայացուցչի հետ իրականացվել է իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցություն և խորհրդատվություն՝

- ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերի վերաբերյալ,

- վարչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում հաճախ հանդիպող խախտումների վերաբերյալ,

- համավարակի պատճառով առաջացած խնդիրների և դրանց լուծման հետ կապված հարցերի քննարկում,

- նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ,

- հաստատություններում ուսումնառող արցախցի սովորողների կրթական կարիքների և կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմերի կիրառման մասին:

6) ԿՏՄ կողմից տարբեր պետական մարմինների առաջարկներով լրացումների և փոփոխությունների առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Մասնավորապես, ԿԳՄՍ նախարարության առաջարկով դիտարկումներ են ներկայացվել՝

– «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի.

– ՀՀ կառավարության 14.10.2010թ. «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշմամբ հաստատված N 4 Հավելվածի.

– ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանով հաստատված հավելվածի.

– «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և ուսումնական հաստատությունների պետական միասնական վարչական ռեգիստրի վարման կարգը սահմանելու մասին» հրամանի.

– «ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանը հաստատելու մասին» հրամանի.

– «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» հրամանի.

– «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև՝

– միջին մասնագիտական կրթության 3-73.20.01 «Շուկայաբանություն» մասնագիտության պետական կրթական չափորոշչով նախատեսված 3-73.20.01.01-4 «Շուկայաբան» որակավորման (ՀՀ կրթության և գիտության նախարարի N413-Ն հրաման)՝ ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշմամբ հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջներին՝ 0414.01.5 «Շուկայաբանություն»

մասնագիտության 0414.01.01.5 «Մարկետոլոգ» մասնագիտության որակավորման դասիչին և անվանը անհամապատասխանության.

- ՀՀ ԿԳ նախարարի 2012թ. ապրիլի 5-ի N 254-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգում» Ազգային բանակից զորացրված ուսանողների հրամանագրման կարգավորում սահմանելու վերաբերյալ:

7) Համաձայն ԿՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրի՝ Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ իրականացվող վերահսկողության շրջանակում՝ կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը, հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով՝

– եռամսյա պարբերականությամբ, բոլոր ուսումնական հաստատությունների (բացառությամբ՝ նախադպրոցական) մասով ԿՏՄ-ն ստացել է տեղեկատվություն արցախցի սովորողների՝ ՀՀ ուսումնական հաստատություններում ընդգրկված լինելու (շարժի) վերաբերյալ.

– 2021 թվականի ստուգումների ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում (բացառությամբ՝ նախադպրոցական) իրականացված ստուգումների շրջանակում, արցախցի սովորողների առկայության դեպքում, անցկացվել են կրթական կարիքների վերաբերյալ հարցումներ սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնական հաստատության մանկավարժական և վարչական կազմի հետ.

– ըստ անհրաժեշտության, ուսուցիչների օգնությամբ լրացուցիչ ուսուցում ապահովելու նպատակով՝ դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում առանձնացվել են ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքներին մասնակցած Արցախից տեղափոխված սովորողների գրավոր աշխատանքները: Գրավոր աշխատանքների արդյունքում (կիսամյակային, տարեկան) ՊԱնբավարարՊ գնահատված 8 դպրոցների 13 սովորողների վերաբերյալ գրություններ են ուղարկվել ԿԳՄՍ նախարարին, Երևանի քաղաքապետին, ՀՀ Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզպետներին՝ այդ սովորողների ուսման որակը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկով:

8) Իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններն ըստ ոլորտների՝ համապատասխան առաջարկներով ուղարկվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարին: ԿՏՄ գործունեության վերաբերյալ եռամսյակային, դիմում-բողոքներում բարձրացված հարցերի ուսումնասիրություններին և ստուգումներին վերաբերող կիսամյակային հաշվետվությունները հրապարակվել են ԿՏՄ կայքում:

9) 2021 թվականի ընթացքում տեսչական մարմնում մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» օրենքի նախագիծը, որն արդեն ներկայացվել է համապատասխան մարմինների կարծիքին:

10) Լրամշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

11) Մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել նախադպրոցական ուսումնական հաստատություններում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:

12) Լրամշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել տեսչական մարմնի կողմից ՀՈՒՀ-երում, ՆՄԱՈՒՀ-երում և ՄՄՈՒՀ-երում իրականացվող ստուգումների ստուգաթերթերը:

13) Մշակվել և ներդրման փուլում է ԿՏՄ նոր կայքը, որն առավել ընդգրկուն է և գործածական առումով՝ հագեցած ու ճկուն:

14) Տեսչական մարմինը արդյունավետորեն համագործակցել է ՀՀ վարչապետի աշխատակազմի Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի հետ՝ «iԳործ» ծրագրի շրջանակում: Նշված ծրագրով տեսչական մարմնի աշխատանքներում ներգրավված մասնագետները հաջողությամբ իրականացնում են իրենց լիազորությունների շրջանակներով սահմանված աշխատանքները:

15) «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագրի (դասալսումներ) ֆինանսավորման համար իրականացված աշխատանքների (հանդիպումներ,

հիմնավորումների ներկայացում) արդյունքում 5.580 մլն ՀՀ դրամ է հատկացվել (ներառվել է ԿՏՄ 2022 թվականի բյուջետային հայտում):

4.2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

1) Նախադպրոցական ոլորտի ուսումնական հաստատությունների համար կիրականացվեն ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

2) Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով 2022 թվականին նախատեսված ստուգումների ընթացքում հանրակրթական դպրոցների 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին կտրվեն գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Հայոց լեզու» («Մայրենի») առարկաներից:

Գրավոր աշխատանքների արդյունքները, որպես վիճակագրական տվյալներ, կգործածվեն տեսչական մարմնի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում:

Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ կտրվեն 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվելու են նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքները:

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումները կիրականացվեն 11 ստուգաթերթերով (№№ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 11, 12, 14, 15):

Վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով 2022 թվականի ընթացքում ստուգվող դպրոցներից 20-ում, որպես պիլոտային ծրագիր (ԱՈՒԿ ծրագիր), կիրականացվեն՝

– ուսումնական պարապմունքների լսումներ, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.

– դասավանդողի մանկավարժական-մեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում.

– դասալսումներ իրականացնող մասնագետների ընտրության կարգի մշակում և տեսչական մարմնի կառավարման խորհրդի հավանությանը ներկայացում.

– դասալսումների ձևաթղթի լրամշկում «Դասավանդիր, Հայաստան» կազմակերպության հետ (համաձայնությամբ).

– ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման և կրթական գործընթացի մասնակիցների հետ անցկացված հարցումների (այդ թվում՝ անանուն) արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում, մասնագիտական կարծիքի (հաշվետվետվություն, եզրակացություն) ներկայացում և այլն:

Դասալսումները կիրականացվեն այն դասարաններում, որտեղ կտրվեն գրավոր աշխատանքներ: Տեսչական մարմնում առկա՝ մրցութային կարգով ընտրված մասնագետների տվյալների բազայից, ըստ դասալսվող առարկաների, կընտրվեն դասալսումներն իրականացնող համապատասխան մասնագետներ: Ըստ անհրաժեշտության, մասնագետներ կներգրավվեն նաև մանկավարժական կադրեր պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատություններից:

Մասնագետների ներգրավումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում կներկայացնեն սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ 60 եզրակացություն, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից առավել ճշգրիտ կներկայացվեն հանրակրթական դպրոցներում ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները: Ուսումնական հաստատություններին կներկայացվեն կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ

հասցեական առաջարկություններ, իսկ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կրթության որակի առկա վիճակի մասին հաշվետվություններ, վերլուծական եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

3) **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտի** ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում նախատեսվում է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների («Վարսահարդարում և խնամք», «Հյուրանոցային և ռեստորանային սպասարկում», «Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն», «Կիրառական արվեստ» և «Ինֆորմատիկա» մասնագիտությունների համար):

4) **Միջին մասնագիտական կրթության ոլորտի** ստուգվող ՄՄԱՈՒՀ-ներում նախատեսվում է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների («Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն», «Երաժշտություն և կատարողական արվեստ», «Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն», «Կառավարում և վարչարարություն», «Ինֆորմատիկա», «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների համար):

5) Ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ներառական կրթական միջավայրի գնահատման նպատակով նախատեսվում է մշակել համապատասխան գործիքակազմ (ձևաթղթեր):

6) Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է մշակել համապատասխան գործիքակազմ (ձևաթղթեր):

7) Ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների համար կիրականացվեն հանրակրթական խորհրդատվական միջոցառումներ:

8) Կրթության էլեկտրոնային ուսուցման գործիքների հասանելիության (չուսումնասիրվող առարկաների առկայություն) նկատմամբ կիրականացվի վերահսկողություն (ուսումնասիրություն), և արդյունքները կներկայացվեն պատասխանատու կառույցներին (ԿԳՄՄՆ, լիազոր մարմիններ):

9) Կմշակվի տարրական դպրոցի սովորողների ընթերցելու և ընկալելու կարողությունների (այսուհետ՝ կարողություն) գնահատման գործիքակազմը, կիրականացվի կարողությունների գնահատում, կարողությունների ձևավորման վրա տարբեր գործոնների ազդեցության հայտնաբերում, առաջարկությունների ներկայացում, մեթոդական աջակցություն:

10) Կրթական գործընթացի կազմակերպման նկատմամբ վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթերի՝ իրավական ակտերին համապատասխանությունը որոշելու նպատակով կիրականացվի համագործակցություն Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ:

11) 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Արցախի Հանրապետության կրթության ոլորտի վերականգնման գործընթացներին նպաստելու նպատակով տեսչական մարմինը կնախաձեռնի իրավական-մեթոդական աջակցության տրամադրում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ փոխադարձ այցերի, փորձի փոխանակման, կանխարգելիչ և վերահսկողական գործառույթների համատեղ իրականացման միջոցով:

5. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Գերակա խնդիր է կրթության և գիտության զարգացումը, որի շնորհիվ միայն հնարավոր է հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության»:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիր,
«4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

Ղեկավարվելով ՀՀ կառավարության ծրագրով (2021-2026 թվականներ), հիմք ընդունելով տեսչական մարմնի կանոնադրական նպատակը, հաշվի առնելով տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության արդյունքները՝ տեսչական մարմնի

գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրի նպատակն, ըստ վերահսկողության ոլորտների, սահմանվում է հետևյալ բովանդակությամբ.

Ծրագրի նպատակն է՝

նպաստել տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առավել որակյալ, մատչելի և արդիական կրթության պահովմանը:

Ծրագրի նպատակից բխող խնդիրները

(գործառույթների ապահովման կամ իրականացման նկատմամբ վերահսկողություն)՝

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ[1]	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ
Կրթական գործընթացի արդյունավետության (ուսումնառության և ուսուցման որակ, կրթության կազմակերպման անվտանգություն, մատչելիություն, տարատեսակ աղետներին դիմակայունություն) ապահովում	Կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովում
Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում ուսուցման գործընթացում (բոլոր առարկաների ուսուցման հնարավորություն և ապահովում)	Շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների համապատասխանություն ժամանակակից պահանջներին, ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպում

[1] Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նախադպրոցական ուսումնական հաստատություններ չեն ներառվել՝ համաձայն ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների:

Ներառական կրթական միջավայրի առկայություն

Ծրագրի խնդիրներից բխող գործողությունները ներկայացված են 6-րդ բաժնում:

6. ԿՏՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ N 1

Գործողություն	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Կատարող	Համա-կատարող	Գնահատման չափանիշ
1. ԿՏՄ 2022 թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված 123 ՀՈՒՀ-երում ստուգումներ	Կրթության արդյունավետ կազմակերպմանը (ներառյալ՝ ուսուցմանը և ուսումնառությանը) աջակցում	Տարվա ընթացքում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրացված ստուգաթերթեր, տեղեկանք կամ ակտ, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), գրությունների նախագծեր
2. Համայնքապետարանների աշխատակազմի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում (ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումներում)՝ ըստ համապատասխան ձևաթղթի	ՏԻՄ մակարդակում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ աշխատակիցների իրավագիտակցության բարձրացում	II, III եռամսյակներ	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Հաշվետվություն, արձանագրություն, տեղեկանք, զեկուցագիր, գրություն, լրացված ձևաթուղթ, առաջարկություն, եզրակացություն
3. Ստուգվող առնվազն 20 ՀՈՒՀ-երի 4-րդ, 9-րդ, 11-րդ դասարաններում «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Հայոց լեզու» և «Մայրենի առարկաներից դասալսումներ (ԱՈՒԿ ծրագիր)	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	II, IV եռամսյակներ	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ Ներգրավ-ված մասնագետ-ներ	Եզրակացություն, առաջարկություն, գրություն, լրացված ձևաթուղթ, զեկուցագիր

4. Ստուգվող 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Հայոց լեզու» առարկաներից (գրավոր աշխատանք)	Ուսումնառության որակի բարելավմանը, չափորոշչային պահանջների ապահովմանը աջակցում	Տարվա ընթացքում	ՀՎ	ՌԳՄՊՎԳՎ	Գրավոր աշխատանքների տարբերակներ, լրացված ձևաթղթեր, արդյունքների վերլուծական ամփոփ պատկեր եռամսյակային և տարեկան հաշվետվություններում
5. Ստուգվող ՀՈՒՀ-երում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցման գործընթացում բոլոր առարկաների ուսուցման ապահովման գնահատում (չուսուցանվող առարկաների առկայության դեպքում)՝ ըստ մշակված ձևաթղթի	ՀՈՒՀ-երում բոլոր առարկաների ուսուցման կազմակերպմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ՀՎ	ՌԳՄՊՎԳՎ	Մշակված և լրացված ձևաթղթեր, արդյունքների վերլուծական ամփոփ պատկեր եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, առաջարկությունների ներկայացում լիազորված մարմին կամ ԿԳՄՄՆ
6. Ստուգվող ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի	ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի ապահովմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ՀՎ	ՌԳՄՊՎԳՎ	Մշակված և լրացված ձևաթղթեր, արդյունքների վերլուծական ամփոփ պատկեր եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, առաջարկությունների ներկայացում լիազորված մարմին կամ ԿԳՄՄՆ
7. Հանրությունից ստացված դիմումների, բողոքների քննարկում, պարզաբանում, ուսումնասիրություն, ստուգում	Դիմումներում բարձրացված հարցերի լուծում, խնդիրների վերհանում	Տարվա ընթացքում	ՀՎ ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Հաշվետվություն, ակտ, առաջարկություն, տեղեկանք, գրություն, զեկուցագիր եզրակացություն, հանձնարարական, ստուգաթերթեր

8. ԿՏՄ 2022թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված 7 ՆՄԱՌԻՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ստուգում	Կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացում	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրացված ստուգաթերթեր, տեղեկանք կամ ակտ, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), գրությունների նախագծեր
9. Ստուգվող ՆՄԱՌԻՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների («Վարսահարդարում և խնամք», «Հյուրանոցային և ռեստորանային սպասարկում», «Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն», «Կիրառական արվեստ» և «Ինֆորմատիկա» մասնագիտությունների համար)	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրացված գնահատման ձևաթղթեր, վերլուծություն, եզրակացություն, առաջարկություններ
10. Ստուգվող ՄՄՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների («Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն», «Երաժշտություն և կատարողական արվեստ», «Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն», «Կառավարում և վարչարարություն», «Ինֆորմատիկա», «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների համար)	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրացված գնահատման ձևաթղթեր, վերլուծություն, եզրակացություն, առաջարկություններ

11. Ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի	ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ներառական կրթական միջավայրի ապահովմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ	Մշակված և լրացված ձևաթղթեր, արդյունքների վերլուծական ամփոփ պատկեր եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, առաջարկությունների ներկայացում լիազորված մարմին
12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության ձևաթղթի (գործիքակազմի) մշակում	Իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացման համար անհրաժեշտ գործիքակազմի ստեղծում	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Ձևաթղթի առկայություն, փորձարկում՝ ըստ անհրաժեշտության
13. Նախադպրոցական կրթության, հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ստուգաթերթի մշակում	Իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացման հիմքերի ապահովում	II եռամսյակ	ԻԱՓՎ	ՀՎ ՆՄՄԿՎ ՌԳՍՊՎԳՎ	Մշակված ստուգաթերթ, ստուգաթերթի փորձարկում՝ ըստ անհրաժեշտության
14. Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմվող փաստաթղթերի նախագծերի, կրթության որակի և չափորոշիչների բարելավման, ինչպես նաև գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների իրավական քննարկում և դրա հիման վրա հիմնավորված գրավոր եզրակացության ներկայացում	Կրթության բնագավառի օրենսդրության բարելավմանն աջակցում	Տարվա ընթացքում	ԻԱՓՎ	Կառուց-վածքային ստորաբա-ժանումներ	Գրավոր եզրակացություն

15. «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացման աշխատանքներին մասնակցություն (ըստ անհրաժեշտության)	Կրթության որակի բարձրացման նպատակով՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կրթության կազմակերպման նկատմամբ վերահսկողության իրականացում	Տարվա ընթացքում	ԻԱՓՎ	-	Առաջարկություններ
16. Ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմում և սահմանված կարգով հաստատման ներկայացում	Վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և ուսումնական հաստատություններ	IV եռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ	Կառուց-վածքային ստորաբա-ժանումներ	Ստուգումների տարեկան ծրագիր
17. Վերհսկողական գործառույթների արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների վերացման նպատակով տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների (գրությունների) հիման վրա ռիսկերի վերագնահատում (ըստ անհրաժեշտության)	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ուսումնական հաստատությունների ռիսկայնության որոշում և դասակարգում՝ առկա տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա	Տարվա ընթացքում	ՌԳՍՊՎԳՎ	-	Ըստ ռիսկայնության դասակարգված ուսումնական հաստատությունների բազայի վերագնահատված տվյալներ
18. Իրականացված կանխարգելիչ, իրազեկման և վերհսկողական գործառույթների ազդեցության գնահատում	Իրականացված գործառույթները որքանով են նպաստել ԿՏՄ կանոնադրական նպատակների կատարմանը	I, II կիսամյակներ	ՀՀԿԲ	ՌԳՍՊՎԳՎ	Հրապարակված վերլուծություն
19. Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ուսումնական հաստատություններին տրված՝ նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված վերստուգումներ	Հետադարձ կապի ապահովում	Տարվա ընթացքում	ՆՄՄԿՎ ՌԳՍՊՎԳՎ	ՀՎ	Լրացված ստուգաթերթեր, տեղեկանք կամ ակտ, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), գրությունների նախագծեր, վերլուծություն

7. ԿՏՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ N 2

Գործողություն	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Կատարող	Համա-կատարող	Աշխատանքի արդյունքի ձև
Կանխարգելիչ միջոցառումներ					

1. Նախադպրոցական և հանրակրթության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին ուսումնական հաստատությունների գործունեությունը համապատասխանեցնելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին խորհրդատվության տրամադրում, բացատրական աշխատանքների իրականացում (առկա կամ հեռավար)՝ ստուգումներից առնվազն 1 ամիս առաջ և ըստ անհրաժեշտության	Կրթական գործընթացի մասնակիցների՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում և առկա խնդիրների կարգավորում	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	ՀՀԿԲ	ՀՎ ՌԳՄՊՎԳՎ ԻԱՓՎ	Յուրաքանչյուր եռամսյակում՝ իրականացվել է առնվազն 2 հանդիպում, դրանք լուսաբանվել են ԿՏՄ պաշտոնական կայքում և ԶԼՄ-ներում՝ ըստ Հավելված N 1-ի
2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին ուսումնական հաստատությունների գործունեությունը համապատասխանեցնելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին խորհրդատվության տրամադրում, բացատրական աշխատանքների իրականացում (առկա կամ հեռավար)՝ ստուգումներից առաջ և ըստ անհրաժեշտության (Երևանում և մարզերում)	Կրթական գործընթացի մասնակիցների՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում և առկա խնդիրների կարգավորում	I եռամսյակ II եռամսյակ III եռամսյակ IV եռամսյակ	ՀՀԿԲ	ՆՄՄԿՎ ՌԳՄՊՎԳՎ ԻԱՓՎ	Յուրաքանչյուր եռամսյակում՝ իրականացվել է առնվազն 2 հանդիպում, դրանք լուսաբանվել են ԿՏՄ պաշտոնական կայքում և ԶԼՄ-ներում՝ ըստ Հավելված N 1-ի
3. ԱՈՒԿ ծրագրի շրջանակում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Հայոց պատմություն» (կամ «Մայրենի») առարկաների ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրում՝ դասալսումների և այլ գործառույթների իրականացման միջոցով	Ուսումնական հաստատություններում ուսուցման որակի բարձրացում, ինչն էլ ուղղակիորեն կանդրադառնա սովորողների ուսումնառության արդյունքների	II եռամսյակ IV եռամսյակ	ՀՎ	ՀՀԿԲ ՌԳՄՊՎԳՎ ՆԵՐԳՐԱՎ-ՎԱԾ ՄԱՍՆԱ-ԳԵՏՆԵՐ	Դասալսումների, հանդիպումների, լսումների արդյունքները վերլուծության են ենթարկվել, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել շահագրգիռ մարմիններին, գործառույթները

	(կարողունակությունների) զարգացման վրա				լուսաբանվել են ԿՏՄ պաշտոնական կայքում
4. Տարրական դպրոցի սովորողների ընթերցելու և ընկալելու կարողությունների գնահատման գործիքակազմի մշակում, կարողությունների գնահատում, կարողությունների ձևավորման վրա տարբեր գործոնների ազդեցության հայտնաբերում, առաջարկությունների ներկայացում, մեթոդական աջակցություն	Ուսումնական հաստատություններում օրենսդրությամբ նախատեսված պահանջների ապահովում՝ «Մայրենի» առարկայի արդյունավետ ուսուցումն իրականացնելու ուղղությամբ	I կիսամյակ II կիսամյակ	«ԻԳործ» ծրագրի ներկայա-ցուցիչ	ՀՎ Մասնագետներ ՌԳՍՊՎԳՎ ՀՀԿԲ	Մշակված և ԿՏՄ ղեկավարի հրամանով գործածության մեջ դրված գործիքակազմի միջոցով իրականացված դասալսումների և կանխարգելիչ գործառույթների արդյունքները վերլուծության են ենթարկվել, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել շահագրգիռ մարմիններին, գործառույթները լուսաբանվել են ԿՏՄ պաշտոնական կայքում
5. Աջակցություն Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությանը	ԱՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության արդյունքում ԱՀ ԿԳՄՍ նախարարության և կրթության տեսչության գործառույթների բարելավմանը աջակցություն	Տարվա ընթացքում	ԿՏՄ	-	Փոխադարձ այցելություններ, հեռավար հանդիպումներ, իրավական դաշտի կարգավորման ուղղված գործառույթներ
Իրազեկման միջոցառումներ					
1. ԿՏՄ վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներին ԿՏՄ պաշտոնական կայքէջի և զանգվածային լրատվության միջոցներով՝ իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև	Հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների և այլ	Տարվա ընթացքում՝ ուղեցույցների կամ նոր ընդունված իրավական ակտերի	ՀՀԿԲ	ՀՎ ՆՄՄԿՎ ԻԱՓՎ	ԿՏՄ պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության մեջ նշված են համապատասխան իրավական ակտի լրիվ անվանումը, դրա պաշտոնական

դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում	շահագրգիռ անձանց իրավագիտակցության բարձրացում	պաշտոնական հրապարակ-ման օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում			հրապարակման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղեկագրի անվանումն ու համարը, ինչպես նաև ակտի բովանդակությունն ու կիրառման վերաբերյալ մեկնաբանությունները
2. Հանրակրթության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման միջոցով՝ իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում	Հանրակրթության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների և այլ շահառու անձանց իրավագիտակցության բարձրացում	Տարվա ընթացքում՝ ըստ ուղեցույցների կամ նոր ընդունված իրավական ակտերի առկայության	ՀՎ	ՀՀԿԲ	Տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներին ներկայացվել են նոր ընդունված իրավական ակտերը կամ հրապարակված ուղեցույցները, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները կամ լրացումները, ըստ անհրաժեշտության՝ տրամադրվել է խորհրդատվություն
3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման միջոցով՝ իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում	Տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման միջոցով՝ իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում	Տարվա ընթացքում՝ ըստ ուղեցույցների կամ նոր ընդունված իրավական ակտերի առկայության	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	Տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներին ներկայացվել են նոր ընդունված իրավական ակտերը կամ հրապարակված ուղեցույցները, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները կամ լրացումները, ըստ անհրաժեշտության՝ տրամադրվել է խորհրդատվություն

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ N 1, N 2
(ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ)

Հավելված N 1

Տեսչական մարմնի հանրակրթության վարչության 2022 թվականի կանխարգելիչ և իրազեկման (առկա/հեռավար) միջոցառումների ժամանակացույց

N	Ուսումնական հաստատություններ	Անցկացման վայրը	Հանդիպման ժամկետը	Խորհրդատվության և իրազեկման թեմաներ
Երևան				
1	Հանրակրթական ուսումնական հաստատություններ (ՀՈՒՀ)	Երևան / մարզ	Հունվարի 2-3-րդ տասնօրյակներ Սեպտեմբերի 1-2-րդ տասնօրյակներ	ՀՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը, COVID-19-ը և այլն) վերաբերյալ
2	Ավագ դպրոցներում սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում	Երևան / մարզ	Նոյեմբերի 1-2-րդ տասնօրյակներ	Սովորողների և ծնողների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրազեկում
Գեղարքունիքի մարզ				ՏԻՄ ներկայացուցիչներին աջակցություն՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ
3	Գավառի համայնքապետարան (ՏԻՄ) և ՆՈՒՀ	Գավառ	Մարտի 2-3-րդ տասնօրյակներ	
Արմավիրի մարզ				
4	Արմավիրի համայնքապետարան և ՆՈՒՀ	Արմավիր	Ապրիլի 2-3-րդ տասնօրյակներ	
Կոտայքի մարզ				
5	Չարենցավանի համայնքապետարան և ՆՈՒՀ	Չարենցավան	Մայիսի 2-3-րդ տասնօրյակ	
Վայոց ձորի մարզ				
6	Եղեգնաձորի համայնքապետարան և ՆՈՒՀ	Եղեգնաձոր	Հունիսի 2-3-րդ տասնօրյակներ	

Հավելված N 2

Տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության 2022 թվականի կանխարգելիչ և իրազեկման (առկա/հեռավար) միջոցառումների ժամանակացույց

N	Ուսումնական հաստատություններ Երևան / մարզեր	Անցկացման վայրը	Հանդիպման ժամկետը	Խորհրդատվության և իրազեկման թեմաներ
1.	ԿՏՄ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված բոլոր ՆՄՈՒՀ և ՄՄՈՒՀ	Երևան (մարզ) կամ հեռավար	I եռամսյակ 2 հանդիպում	Ուսումնական հաստատություններին իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում Ուսումնական հաստատությունների հետ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, կոնկրետ հարցերով խորհրդատվության մատուցում ՀՀ ԿՏՄ վերահսկողությունը ՄԿՈՒ ոլորտի լիցենզավորման գործընթացի նկատմամբ Ուսումնական հաստատություններում առաջացած խնդիրների (այդ թվում՝ COVID-19 համավարակով պայմանավորված) վերհանում, քննարկում, լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում
2.	ՀՀ Սյունիք-Վայոց ձոր և Տավուշ-Լոռի մարզերի ՆՄՈՒՀ և ՄՄՈՒՀ	մարզ կամ հեռավար	II եռամսյակ 2 հանդիպում	
3.	ՀՀ Գեղարքունիք-Կոտայք և Շիրակ-Արագածոտն մարզերի ՆՄՈՒՀ և ՄՄՈՒՀ	մարզ կամ հեռավար	III եռամսյակ 2 հանդիպում	
4.	ՀՀ Արմավիր-Արարատ մարզերի և Երևանի ՆՄՈՒՀ և ՄՄՈՒՀ	մարզ կամ հեռավար	IV եռամսյակ 2 հանդիպում	

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

1) 2005 թվականի նոյեմբերի 15-ի «Նախադպրոցական կրթության մասին» ՀՕ-236-Ն օրենքի (նոր խմբագրությամբ՝ 2020թ. մայիսի 5, ՀՕ 267-Ն, ուժի մեջ է մտել 21.05.2020թ.) (այսուհետ՝ օրենք) համաձայն՝ նախադպրոցական կրթության ոլորտ է համարվում նաև **հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների նախակրթարանում, լրացուցիչ կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունում (կամ դրա ստորաբաժանումում), երեխայի կրթության և զարգացման կազմակերպությունում** իրականացվող գործունեությունը: Նշված կազմակերպությունների թիվն, ըստ նախնական տվյալների, շուրջ 650 է, ինչը տեսչական մարմնի համար վերահսկողական, կանխարգելիչ և իրազեկման գործառույթների հավելյալ ծավալ է, և առաջացնում է լրացուցիչ հաստիքների հատկացման անհրաժեշտություն, ինչպես նաև կարող է հիմք հանդիսանալ կամ հանգեցնել տեսչական մարմնի ներքին կառուցվածքային փոփոխության:

2) Կրթության բնագավառի վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական բացերը լրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կրթության բնագավառի վերահսկողության մասին օրինագծի լրամշակման և հաստատման ներկայացման աշխատանքներ:

3) Անհրաժեշտ է տեսչական մարմինն ապահովել պահակային ծառայությամբ:

4) Անհրաժեշտ է տեսչական մարմինն ապահովել ՏՀՏ և այլ անհրաժեշտ միջոցներով (համակարգիչներ, օդորակիչներ, աթոռներ, ավտոմեքենաներ և այլն):

5) Անհրաժեշտ է տեսչական մարմնի գործառույթների արդյունքների վերլուծությունների մեթոդաբանության վերաբերյալ քննարկումներ կամ դասընթացներ կազմակերպել: